ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գիպար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.08.2020թ.),

քննելով Ծաղկաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Գիպար» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված (14.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/71 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Գիպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գիպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.08.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցում:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Գիպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության համաձայն՝ «Գիպար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Գիպար» ՍՊԸ-ին:

Այնուհետև www.gnumner.am պաշտոնական համակարգում հրապարակվել է «Պայմանագիր կնքելու մասին հայտարարություն»՝ առանց անգործության ժամկետ սահմանելու:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հրավերի 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Նույն հրավերի 9.7-րդ կետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Գտնում ենք, որ պայմանագրի նախագծում առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն կհանգեցնի ՍՊԸ-ի և Ծաղկաձորի համայնքապետարանի միջև՝ հրավերով նախատեսված պահանջներից դուրս, այն է՝ պայմանագրի նախագծով նախատեսված այլ պահանջներով պայմանագրի կնքման, մասնավորապես.

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական-բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրից մինչև 30. 10.2020թ., այնինչ առաջարկվող պայմանագրի նախագծով սահմանվել է բոլորովին այլ ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը հրավերի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գիպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 2-ով՝ Օրացուցային գրաֆիկով, սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքներ»	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրից	30. 10.2020թ.
ընդամենը		30.10.2020թ.	

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գիպար» ՍՊԸ-ի 13.08.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, և գործով առկա փաստաթղթերը, գտնում եմ, որ «Գիպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ընթացակարգի Հրավերի (հետայսու նաև Հրավեր) 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.7 ենթակետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Այսպես, Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքների

ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գիպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 2-ով՝ Օրացուցային գրաֆիկով, սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքներ»	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրից	30. 10.2020թ.
ընդամենը		30.10.2020թ.	

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 03 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Գիպար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս «Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքների» կատարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել պայմանագիր կնքելու նպատակով Ընկերությանը պայմանագրի նախագիծը ծանուցելու վերաբերյալ՝ առաջարկելով վերջինիս 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիք՝ պայմանագրի ապահովում, կնքվելիք պայմանագրի 10 /տասը/ տոկոսի չափով և բանկային երաշխիք՝ որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 100 /հարյուր/ տոկոսի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 03.08.2020թ. Ընկերությանը ծանուցել է պայմանագրի նախագիծը, որի Հավելված 1-ով՝ Օրացուցային գրաֆիկով, սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգման աշխատանքներ»	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրից	30. 10.2020թ.

ընդամենը	30.10.2020թ.

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկը և այն համադրելով Ընկերությանն ուղարկված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի գործողություններն իրավաչափ են, և վերջինս գործել է վերը շարադրված իրավական նորմերի պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գիպար» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**